



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Պատերազմից հետո՝ պատերազմի մեջ

Արցախը հայության համախմբման ու միասնական հաղթանակի խորհրդանիշ է: Դա քանիցս ապացուցվել է եւ ապացուցվեց նաեւ վերջերս՝ ապրիլյան գործողությունների ընթացքում: Զգիտես ինչու, սակայն, մենք՝ հայերս, սիրում ենք համախմբվել լուր օրհասական պահերին, ու միայն այդ ժամանակ է, երբ հայրենիքը բոլորիս համար դառնում է գերխնդիր՝ մի կողմ թողնելով մեր մեջ եղած տարածայնություններն ու քաղաքական հակադիր հայացքները:

Զգիտես ինչու, երբ թվում է՝ օրհասական պահը նահանջել է /որը երբեք էլ չի նահանջում/, մենք միշտ հիշողության կորուստ ենք ունենում, մեզ թույլ տալիս այնպիսի կեցվածք, որն անընդունելի էինք համարում պատերազմի օրերին: Օրինակ՝ պատերազմից հետո ոմանք համարձակորեն խոսում են մեր իսկ Սահմանադրությամբ ամրագրված տարածքների վերադարձի մասին, ոմանք համարում են, որ դրանք այնքան էլ մերը չեն կամ էական նշանակություն չունեն մեզ համար, ոմանք էլ՝ իրենց իրավունք են վերապահում յուրացնելու պատերազմում տարած հաղթանակը, դարձնելու այն իրենց «մենաշնորհը»՝ իրենց վերագրելով այնպիսի «հերոսություններ», որ ականատեսների համար շատ հաճախ ծիծաղելի են թվում, շատ հաճախ՝ ուղղակի զգարելի:

Պատերազմից հետո ոմանք մոռանում են այդ պատերազմը տարած զինվորի խնդիրների մասին, եւ զինվորի շատ ու շատ խնդիրներ այդպես էլ մնում են չլուծված: Անընդունելի է նաեւ, որ միասնությամբ պայքարելուց հետո մենք թույլ ենք տալիս, որ մեր մեջ գլուխ բարձրացնեն մեր իսկ պետականությանն ու հետագա ընթացքին խոչընդոտող, սպառնացող երեւույթներ. երեւույթներ, որոնք ի չիք են դարձնում այն ձեռքբերումները, որ թվում է ունեինք կամ որոնք ձգտում ենք:

Մենք սիրում ենք մեր մեջ զարգացող ժողովրդավարական արժեքներով հակադրվել հարեւան Ադրբեջանին, բայց երբեմն թույլ ենք տալիս, որ մեր մեջ զարգանա մեր իսկ քարոզած ժողովրդավարությունն ախտահանող գործոններ, որոնք գործիք են դառնում մեր հակառակորդի ձեռքին ու դառնում ավելի մեծ չարիք, քան պատերազմն ինքը:

Պատերազմից հետո մենք մոռանում ենք, որ հայրենիքը կոչվածն ոչ մեկիս մենաշնորհը չէ, ու ոչ մեկս իրավունք չունենք այնտեղ հաստատելու մեր «սեփական կարգերը», մեր ուզած ճանապարհով հարցեր լուծելու, հին ու նոր հաշիվներ մաքրելու, հաշվեհարդարներ տեսնելու այն էլ՝ այնպիսի հայտարարություններով ու գործողություններով, որոնք ուղղակի վտանգում են բոլորիս անվտանգությունը, հարվածում պետականության ամրապնդմանը:

Պատերազմից հետո մենք մոռանում ենք, որ պատերազմը չի ավարտվել, որ երկիրն ու այդ երկիրը պահող բանակը կառուցվում է լուր օրենքի ու օրինականության վրա, պատասխանատվության ու պարտականության չափի գիտակցման վրա. հակառակ ամեն բան տանում է հակառակի, իսկ նման ճանապարհով չեն ամրանում, չեն զարգանում, «լավագույն» դեպքում՝ ապրում են ինքնախաբեկանքի մեջ...

Պատերազմից հետո մենք միշտ խոսում ենք պատերազմի դասերի մասին, բայց շատ հաճախ լուր խոսում ենք, եւ խոսքը դաս չի դառնում, գործողություն չի դառնում. դասը մնում է օդում կախված, որ հաջորդ պատերազմի ժամանակ դարձյալ խոսքի վերածվի...

Պատերազմից հետո մենք այդպես էլ «խելքի չենք գալիս...»:



ՀՀԴ Հայ Դատի Եվրոպայի գրասենյակի նախաձեռնությամբ Բելգիայում էր Արցախի Հանրապետության նախագահը

Արցախի նախագահ Բակո Սահակյանի գլխավորած պատվիրակությունն այս օրերին գտնվում էր Բելգիայում: Նախագահի այցը Բելգիա կազմակերպվել էր ՀՀԴ Հայ Դատի Եվրոպայի գրասենյակի նախաձեռնությամբ:

Այցի ընթացքում Բակո Սահակյանը, ՀՀԴ Հայ Դատի Եվրոպայի հանձնախմբի ղեկավար Գասպար Կարապետյանի ուղեկցությամբ, մի շարք կարևոր քաղաքական հանդիպումներ ու այցելություններ է ունեցել: Գլխավորապես՝ հանդիպումներ է ունեցել Բրյուսելի ֆլամանական խորհրդարանականների, ֆրանկոֆոն խորհրդարանի անդամների, Բելգիայի ակադեմիական շրջանակների, տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, այցելել է Բելգիայում ՀՀ դեսպանատուն եւ այլն:

Այցի շրջանակներում՝ հունիսի 8-ին նախագահը նաեւ Բրյուսելի Հայ Դատի գրասենյակում հանդիպում է ունեցել ՀՀԴ Հայ Դատի Եվրոպայի հանձնախմբի անդամների հետ՝ կառույցի ղեկավար Գասպար Կարապետյանի գլխավորությամբ: Հանդիպմանը քննարկվել են Հայրենիք-Սփյուռք կապերին ու տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներին վերաբերող հարցեր:

Նախագահ Սահակյանն արժեւորել է ՀՀԴ Հայ Դատի գործունեությունը համահայկական նշանակություն ունեցող խնդիրների լուծման եւ Արցախի մշտապես սատարելու ուղղությամբ՝ նշելով, որ դրա շնորհիվ բազմաթիվ կարևոր հարցեր ստանում են արդյունավետ լուծում-

ներ: Արցախի նախագահ Բակո Սահակյանի այցը Բելգիա քաղաքական կարևոր նշանակություն ունի: Այս մասին «Արմենպրես»-ի հետ զրույցում նշել է ՀՀԴ Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի հաղորդակցության պատասխանատու Պետո Դեմիրճյանը:

Նրա խոսքով՝ այցի ընթացքում շեշտադրվել են մի քանի հարցեր՝ Բելգիայի քաղաքական գործիչներին դարաբաղյան խնդրի իրական պատկերի ներկայացում, Արցախի հետ հարաբերությունների խորացում, Ադրբեջանի սանձազերծած գործողություններին պետք է տալ հասցեական գնահատական:

«Արցախը վճռական է խաղաղության պահպանման հարցում, ձգտում է առաջ շարժվել ժողովրդավարական կարգով, իսկ Ադրբեջանը խոչընդոտում է: Սա է եղել Բակո Սահակյանի ուղերձն՝ ընդգծելով, որ Ադրբեջանին ուղղված խոսքերը պետք է լինեն թիրախավորված: Ու եթե պետությունը ճանաչված չէ, ապա դա չի նշանակում, որ իրավունք չունի արարելու, ստեղծագործելու, այլ երկրների հետ հարաբերություններ ունենալու», - ասել է Պետո Դեմիրճյանը՝ ընդգծելով, որ Բակո Սահակյանի այցը նաեւ տեղի լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում է եղել: Արցախի նախագահը ելույթ է ունեցել ակադեմիական շրջանակում՝ Համալսարանական հիմնադրամում: Նա հանդիպում է ունեցել տեղի հայ համայնքի հետ: Հայ համայնքն իր պատրաստակամությունն է հայտնել սատարելու Արցախին: Պետո Դեմիրճյանը տեղեկացրել է, որ առաջիկայում առավել ակտիվանալու են Արցախի պետական, քաղաքական գործիչների այցելությունները Եվրոպա: Շատ կարևոր է դարաբաղյան խնդրի մասին անձամբ եվրոպացի գործընկերներին ներկայացնելը:

